ԱՒՍՏՐԻՈՅ Վ. ԵՒ ԿԱՅՍԵՐ ՇՆՈՐՀՔՆ ԱՌ ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔՆ

Ընցեալ աւուր թիւթով մը պատմեցինք Աւստրիոյ Վ. Հ. Գեորգեր Ա. Երու սաղէմ այցելութեան միջոցին, նաև մեր Նորայի Ս. Պատրիարքին՝ նորին վեհափառութեան մատուցած յարգանքն, և նորին վեհափառութեան՝ մեր Ս. Յակոբայ վանքն ու պատրիարքարանը կատարած այցելութիւնը։

Օրագրին մէջ Ս. Երուսաղէմէն գրուած նամակի մը մէջ կը կարդանք որ նորին վեհափառութիւնը իւր Հիսուսին ձեւօք Նորայի Ս. Պատրիարքին յատուկ խաչ մը շնորհելէ զատ, յատուկ շնորհակալութիւն յայտներ է նաև Հայոց կողմէն իրեն ցուցուած համակրական ընդունելութեանը։

Նոյն նամակին մէջ կը կարդանք նաև որ վերջին քրիստոնեայ թագաւորը Երուսաղէմ երթալէն ի վեր 400 տարի է եղեր, որ Փրեդերիկոս Բ. Նոյնպէս Աւստրիոյ կայսրն է եղեր, որ Գրիգոր Թ. Հռոմայ պապէն բանադրուած ըլլալով, Լատին կղերին կողմանէ եկեղեցական հանդէսներով չէ ընդունուեր Ս. քաղաքին մէջ, և որ հոն Երուսաղէմի թագաւոր պատկուելով, նոյն հանդէսին ներկայ գտնուեր են միայն Հայ վարդապետները Լատին կղերին տեղ, առանց պակասութիւնը լեցնելով։

Ահաւասիկ նոյն նամակին Նորայի սրբազանին եղած շնորհքն ու շնորհակալութիւնը պարունակող մասը։

«Քաղաքիս Աւստրիական Մեծ. Հիսուսը ամսոյս (նոյ.) եօթնեներորդ օրը անձամբ գալով ի Սուրբ աթոռս նուիրեց «Նորին Վ. Հ. Յովսէփ կայսեր կողմէն ա«կանակուս գեղեցիկ խաչ մը*։ Այս շնորհքը որչափ որ մեծ և եղական է, այնչափ աւելի նշանակութեան արժանի է «իւր շնորհակալութիւնը և գոհունակու«թիւնը, զոր իւր Մեծ. Հիսուսին ձեւ«քով արտայայտեց Սրբազան Պատրիարքին։

Մանդումէ, թիւ 1089։

Կարնոյ գիր. Առաջնորդը երէկ իւր վիճակը ուղեւորեցաւ բան հրամանի Բ. Դըրան, ինչպէս երէկ ծանուցած էինք։

Փունջ, թիւ 456

Կարինէն լուր կուգան թէ Գ. Եր. Յարութիւն սրբազան դեկտ. 1-ին յիշեալ քաղաքը հասնելով՝ տեղական իշխանութեան կողմանէ մեծ պատուով և ժողովրդեան կողմանէ ալ եռանդագին ցնծութեամբ ընդունուեր է։

Պ. սեմ. կուսակալը քանի մը բարձրաստիճան պաշտօնակալ և երկու հարիւրի չափ զինուոր ընդ առաջ ղրկեր է Նորին սրբազնութեան մինչև ժամ ու կէս ճամբայ տեղ, և Հայ ժողովրդէն ալ մեծ բազմութիւն և եկեղեցական դասն ալ զինքը քանի մը ժամու ճամբայ տեղէ դիմաւորելով, հանդիսաւոր քաղաքը մտցուցեր են։

Մասիս օրաթերթ, թիւ 470.

Ընցեալ շաբաթ գիշեր (նոյ 15) Սամսթիոյ Հայկական զբօսարանը իրրև խօսարան բաց էր։ Ներկայ էին 200-էն աւելի աղգայինք, որոյ միայն 10—20ը օրիորդք էին։ Մէկ քանի առենախօսութիւններ եղան, որոնք գլխաւորապէս Հայաստանի տխուր վիճակը կընկարագրէին։ Ներկայ եղողներուն մէջ պատկառելի լռութիւն մը տիրած էր։ Այս առթիւ 2000 շուրջի մօտ դրամա-

---

*) Ըստ 69 թ. Օրագրոյ Ցրոնոսոս-Ժողովրդի շրանը-շանը։ Ս. Խ՚Բ. Արարատեան.

կան հաւաքում մ՚եղեր է, ի նպաստ մերկ ազգս Աւաղդիի ի դիւղն Մշոյ։

Այսու հետև յիշեալ զբօսարանին մէջ որոշեալ օրեր այսպիսի կարեւոր առենախօսութիւններ պիտի ըլլան։

Սամաթիա ահա այս մասին ալ օրինակ կուտայ ուրիշ թաղերու։ Աւելորդ է ըսել թէ՝ խօսարաններու պէտքը բոլոր քաղաքակրթեալ ազգաց մէջ ճանչցուած ըլլալով, բազմաթիւ խօսարաններ հաստատուած են։

Սամաթիոյ Հայկական ընկերութիւնը բոլոր զգայուն Հայոց շնորհակալութեան արժանի է, իւր այս շահաւէտ ձեռնարկութեան համար։

Փունջ օրագիր, թիւ 456

Երեկ (նոյ. 18) Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն Օգոստոսիան Ինքնակալին ներկայացաւ և անկէ Բ. Դուռը գնաց։

Ծիածան, թիւ 26

Շուէյտի վեհա. թագաւորին Մեծ-Էլոռապետ մօտիւ Տէմիրժիոնը, նոյն տէրութեան պատերազմական ֆրէգատով մը Յունդիպոս հասեր և մատուցեր է բարձրա. Խրտիվին, վասնա. Դուպար փաշային և մէկ երկու եգիպտական զլխաւոր պաշտօնատարաց զշքանշանները՝ զորս յանձնած էր իրեն Շուէյտի վեհապետը։ Ուրախ սրտիւ խնացանք և կը փութամք ծանուցանելու մեր ընթերցողաց, թէ յիշեալ մեծատիճան պաշտօնատարը՝ որ սիրելի եղած է յաչս Շուէյտի թագաւորին, Հայ է ազգաւ, Հայ յատատանեայց Ս. եկեղեցւոյ հաւատարիմ զաւակ և անունն ալ Տէմիրճեան է, զոր լրագիրները սխալմամբ Տէմիրժիոն գրած են։

Արշալոյս

Հայ ազգին անհատներէն այսչափ զանազան տէրութեանց այսպիսի բարձր պաշտօնեներու մէջ գործածութիւնը, ապացոյց է Հայոց՝ հաւատարիմ, գործունեայ ու ճշդ ծառայութեանցը իրենց գտնուած պաշտօնեներուն մէջ։

Մանզումէ թիւ 1105

Ըրմաշի վանահայր գեր. Տ. Գէորգ Ս. եպիսկոպոսը հանդիսիւ մտեր է վանքը։ Իզմիրի մէջ թէ՛ գեր. Փոխ.-առաջնորդին և թէ՛ ժողովրդեան կողմանէ սիրալեր ընդունելութիւն եղեր է Նորին գերապատուութեան։ Պաղաքիր մեծ. Մխիթարեանցն ալ յարգանօք ընդուներ է Գէորգ Սրբազանը։

Յուսալի է թէ, այսուհետև Իզմիրի ազգայինք առհասարակ հաշտ աչօք կ՚նային Ըրմաշի վանուց վրայ, որ՝ ինչպէս շատ առիթներով ըսած՝ եմք՝ ազգային յառաջադիմութեան համար օգտակարագոյն հաստատութիւն մ՚է։

Փունջ օրագիր, թիւ 474

Երեկ Գեր. Սեդեան սրբազան Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին Ս. Պատարագ մատոյց, վասն հոգւոյն Գէորգ պէյ Ռափայելեանի ազնիւ (Էֆտիկ) տիկնոջ որ՝ բարեհաճած էր 100 ոսկի նուիրել Աղտպեան վարժարանի։

Օրագիր, թիւ 60.

Անձնուէր ընկերութիւնն Աստոյ շատ մը տեղերն հետզհետէ ճիւղեր կ՚արձակէ. այս շաբթու ձեռքերնիս անցած նամակ մը կը ծանուցանէ, որ Սեբաստիոյ մօտերը Մանճրլբէ ըսուած գիւղը ճիւղ մը հաստատուեր է, տեղւոյն Հաքարիա եպիսկոպոսին ձեռքով՝ որ Սեբաստիայէն դասաղիրք կը խնդրէ եղեր։

Մենք և՛ կը խնդրեմք որ Պօլսեցիք համակրական աչք նային այս ընկերութեան, որ Հայաստանի մէջ մասնաւորական լոյսը կը սփռէ, և կը փափաքինք տեսնել մայրաքաղաքիս ուսումնասէր աղդայնոց առ այն մասուցանելիք ձեռնտուութիւնը, որու ըստ ամենայնի կարօտ է, մանաւանդ թէ նոյն իսկ Սեբաստիոյ մէջ ոխերիմ և խռովարար թշնամիներէ սասակապէս կը նեղուի։

Ծիածան. Թիւ 59։

Ուլնիոյ չորս իշխաններէն Ամենի Տիւնեա Ասուածատուր Լիֆինային, զոր Ռ. Դուռը միւս երեք ընկերացը հետ Ուլնիոյ ժողովին անդամ անուանած և Մէճլիսի նշանաւ պատուած էր, անցեալները մայրաքաղաքիս Հալէպ և անկէց ալ Ուլնիա դառնալէ քանի մ՚օր ետքը հիւանդացեր և չկրնալով բժկուիլ, վախճաներ է։

Մասիս. Թիւ 468։

Գեր. Սահակ Եպիսկոպոսի Ամբ. Տէրութիւնը Վրդ. Պալէշեանին ուղղուած գրութիւնը

(Շարունակութիւն և վերջ)

Գեր. Սահակ սրբազան եւ իր Արժ. ընկերը Վակշում Կովազի իշխանէն ալ Թէ եւ քանիցս իրենց միա բանութեան ծոցը վերադառնալու հրաման խնդրեր են, բայց միշտ սա պատասխանը տուեր են Թէ «զձեզ վար դնելը կամ Ճամբելը ետրէն ժողովով որոշուելիք խնդիր մըն է, այն ատենը լուր կուտամ, հիմայ հանգիստ նստեցէք»։ Քիչ մը ետքը Տօրկա ՔիսանըմէրէՔ ըսուած գիւղը խրկեր է զնոցին սրբութիւնը, գիւղացւոց հրաման խրկելով որ օրինաւոր ուտելիք տան. բայց հոն ալ գրեՔէ չբաւորութեամբ կեանք անցուցնելու դատապարտուեր են. եւ վերջապէս նոյն գիւղէն մահուան վտանգներէ հազիւ հազ ազատելով, որուն մանրամասն պատմութիւնը ընել խիստ երկար կըլլայ. Պէրէսայի Ապունա ԹէրթէմանոՔ կոչուած տեղը ցոյց տուեր է նոցին բնակութեանը համար, ուր եւսբանի մը անգամ իրենց վերադարձը խնդրեր են զրով, բայց «ճանապարհ չկայ, ես գնեց օրինաւոր կերպով պիտի խրկեմ, հիմայ այնչափ հարուստ չեմ, բիչ մը ատեն սպասեցէք, եւայլն եւայլն» կրսէ եղեր. ասանկով տարիի մը չափ ալ այն կողմերը անցունելու պարտաւորուեր են մինչեւ որ վերջին օրերս Մուսավվայի Գաղդիական եւ միանգամայն Անդղիական հիւպատոս Պ. Միւնդինճէրիի մէկ նամակը եկեր հասեր է Վակշում Կովազին ուղղեալ, որով հիւպատոսը իրեն կիմացունէ Թէ Թէկրիի Ճամբան բաց է, եւ Թէ Տէճաճ Գասան (Գասայի իշխան) պատրաստ է Ճամբայ տալու. ուստի կաղաչէ որ իւր քովը հիւր եղող եկեղեցականներուն Ս. Երուսաղէմ վերադառնալու հրաման տալու բարեհաճի. այս լուրը նոցին սրբութեան ալ հասեր է Մուսավվա բնակող Պ. Առաքել Յ. Ճիվէլէկեան հայազգի անձին կողմանէ յատուկ գրով մը, որուն ազդասիրական եւնոնը գովութեան արժանի է։ Գեր. Սահակ եպիսկոպոսն ալ անմիջապէս խնդրագիր մը ուղղեր է իշխանին, որպէս զի իրենց հրաման տալոյ բարեհաճի. նա ալ խնդրուած հրամանը տալու վերջապէս գիջեր եւ իւր կողմանէ երկու ջորի պարգեւելով Ճամբայ հանել տուեր է զնոցին սրբութիւնը, (ինքը հինգ վեց աւուր Ճամբայ հեռի կըգտնուի եղեր այն միջոցին), եւ միանգամայն իւր հաւատարիմներէն մէկը յատկապէս պատգամաւոր դրկելով նորին միջնորդութեամբը ազաչէր է որ հիւպատոսին հետ համամտութեամբ միջնորդ կանգնին իւր եւ Թէկրիի իշխան Տէճաճ Գասային մէջ հաշտութիւն ընելու, եւ յայտնուցեր է Թէ ներողամիտ պէտք է ըլլան որ ըստ արժանոյն պատուած չէ զիրենք. նոցին սրբութիւնն ալ արժան եղածը տնօրինելու խոստանալով, ներկայ տարւոյս աւագ չորեքշաբթի օրը նոյն երկրէն Ճանապարհ ելնելու պատրաստուած ժամանակնին, տեղացւոց բոլորին ալ համակրութիւնն արդէն դրաւած ըլլալովնին, մեծէն մինչեւ պզտիկը լալոտ աչօք ազաչեր են որ չերթան ու Գեր. Սահակ եպիսկոպոսը իրենց Ապունա (առաջնորդ) ըլլայ փախանակ Ղպտի եպիսկոպոսին, եւ Վակշում Կովազին ալ բարկացեր ու հայհոյութիւններ ըրեր են որ նորին գերապատուութեանը պէս եպիսկոպոս մը մեռէ կը հանէ կոր. այսպէս բոլորին ալ սիրտը հետերնին տանելով եւ նոյն երկրին կատարարչին հրամանաւը 200ի չափ գինուոր իրենց ուղեկից ունենալով մեկներ են մեր եկեղեցականը. բայց գիւղացւոց բեռ մը չըլլալու համար կէս Ճամբէն ետ դարձուցեր են զինուորները. եւ նոյն ինքն գիւղացւոց առաջնորդութեամբ Ակռ ըսուած լեռնային եւ անջրդի Ճանապարհէն բազում դժուարութեամբ եւ նեղութեամբ 42 օր Ճանապարհորդութիւն ընելով Տէճաճ կամ Տէճազմաճ Գասայի տիրապետութեան Թէկրիի